




Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տոն օրերէն):

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով:

Ցայտարարութիւնները համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպեկ:

ԱՌԱՋԻԿԱՅ 1890 ԹԻԱԿԱՆԻՆ

ՄՇԱԿ

ԿՐԸԿԱՆԵԿԱՆ ԵՒ ՔՐԸԱՔԱՆԵԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Կը հրատարակվի Թիֆլիսում, նոյն ղրբըով և նոյն պրոգրամայով: Մինք ստանում ենք սեփական ՀԵՌԱԳԻՐՆԵՐԻ:
«ՄՇԱԿ» տարեկան գինը 10 ռուբլի է, վեց ամսվանը 6 ռուբլի:
Գրվել «ՄՇԱԿ» կարելի է ՌՄԱՍԿԻՍՏԱՆԸ (Բարձրագույն և Բարձրագույն փողոցների անկյունում, Թամաշիլի տանը):
Կայսրութեան ուրիշ քաղաքներէն «ՄՇԱԿ» գրվելու համար պէտք է ղրբը հետեւեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакція газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

Կովկասեան հայեր և մասնատականներ.—Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մեր դրացի ժողովրդների կրթութիւնը. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Թիւրքիայից. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱՎԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Բժշկի զրոյցները.

ԿՈՎԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐ ԵՒ ՄԱՀՄԵՏԱԿԱՆՆԵՐ

«Մշակ» անցեալ համարներէն մինում ազգայն ուղարկութեան արժանի մի յօդուած, որից տեղեկանում ենք թէ կովկասեան շիա դաւանութեան մահմետականների հոգեւոր պետը, շէյխ-Իւ-սլամը, նորերում ճանապարհորդելով Զանգեզուրի գաւառում, յորդորում էր թուրքերին բարեկամ լինել շայխի հետ, օրինակ առնել Տայիբի աշխատանքները թիւնից, լինայողական ոգուց, ղէպի ուսումը նրանց ունեցած ձգտումից: «Բանտը մտայ» ասեց շէյխը, և այնանց

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԲԺՇԿԻ ԶՐՈՅՆՆԵՐԸ

X

Հասարակութեան ինքնագործունէութիւնը համաճարակութեան արագ տարածումը. Անգլիայի առողջապահական օրէնքների արդիւնքները.—Կարանտիններ.—Հասարակական առողջութիւնը պահպանող մասնագործների և նրանց պարտականութիւնը.—Ժամանակագոր խօսքային հիւանդանոցները չքաւոր դասակարգի համար.—Զիւանդանքների և վերջապէս և այլ իրենցները ղէպի խմբիկայի ենթարկելու համար.—Հիւանդանոցների և քարվասարանների վերահսկողութիւնը:

Խօսքային համաճարակութեան հասարակական թշուառութիւն է, հասարակական չարիք է, համաճարակութեան սահմանափակել և մինչև անգամ արմատախիլ անել կարող է ոչ թէ մէկը երկուսը, այլ ամբողջ հասարակութիւնը: Ինչ օգուտ եթէ մէկը առողջապահութեան սկզբունքների վրա հիմնվելով, աշխատում է վտանգը հեռացնել իր բնակարանից, իր ընտանիքից, քանի որ չէ նայելով համաճարակութեան անխիլ զոհերին: Հաղորւորութեան մարդիկ անհոգութիւնից կամ տգիտութիւնից և վերջապէս չբաւարարվելուց դատապարտված են անտարբեր մնալու: Հասարակական ինքնագործունէութիւնը կարող է միայն աղատել մեզ վարակիչ հիւանդութիւնների դառն հետեւանքներից, ինչպէս էլ որ աղատել է և աղատում է քաղաքակրթ ազգերին: Վերջին խօսքային համաճարակութեան ժամանակ Ֆրան-

թուրքերի մեծ տոկոս տեսայ, ուսումնարան մտայ և այնտեղ թուրք մանուկներին ամենևին չը տեսայ:

Մահմետականների հոգեւոր պետի յորդորը նշանաւոր և ուղարկութեան արժանի մի երեւոյթ է կազմում մեր կովկասեան թուրքերի հասարակական կեանքում: Նրա արտասանած խօսքերը ազդեցող են, որ շէյխը ոչ թէ միայն հետեւում է այժմեան դարի մարդասիրական գաղափարներին, բայց և այն աստիճան լուսաւորված մարդ է, որ հասկանում է թէ մի և նոյն երկրում ապրող երկու ժողովրդները ունեն ընդհանուր հասարակական, տնտեսական շահեր, ուրեմն չեն կարող միմեանց դէմ թշնամարար վերաբերվել, այլ պէտք է հասկանան թէ մի և նոյն երկրի գաւառներ լինելով և ունենալով ընդհանուր շահեր, պէտք է իրար վերաբերվեն փոխադարձ սիրով, պէտք է ամեն դէպքում գործեն փոխադարձ համերաշխութեամբ: Նոյն իսկ իրանց բնակած երկրի օգուտը աչքի առջև ունենալով:

Սիւան շատ քիչ գոյնեցաւ, իր ժամանակին դործ դրած առողջապահական միջոցների շնորհիւ, իսկ քաղաքակրթ Անգլիան ժողովում էր նայելով եւրոպական ազգերի մէջ կատարվող խօսքային պատճառած իրարանցումին, նա հանդիստ մնաց, չէ հրատարակեց ոչ մի հրաման, ոչ մի խորհուրդ, կարանտին անգամ չը կազմեց, այլ հիմնվելով 1864 թ. իր կազմած Sanitary Works—առողջապահական օրէնքների վրա՝ ազատ մնաց թէ եօթնամասուն և թէ ութնու թւականների խօսքային համաճարակութեանը, նա այդ օրէնքի համաձայն իր ժամանակին մաքրեց իր բոլոր քաղաքները, կանոնաւոր ջրանցքներ շինեց, տեխնիկական գիտութիւնների վերջին խօսքի համաձայն կ'անալիզացիւն և կ'ազդեցիւր պեց և այժմ նա հանդիստ է խօսքային համաճարակութեանը նրան երկիւղ չեն սպառնում, նա չատ լաւ գիտէ «British medical journal»-ի ասելով, որ խօսքային պաշտպանելու համար անհրաժեշտ են «առողջ մտածութիւն և անպայման մաքրութիւն»:

Ուրեմն խօսքային աղատվելու համար մասնաւոր և ընդհանուր նախապաշտպանողական միջոցներ պիտի որոնել առողջապահութեան հիմնաւոր սկզբունքների մէջ, և նոյն իսկ ամբողջ մարդկութիւնը համաճարակութեան ծանր հարկական և անճանական առողջապահութեան ըսկը բռնեցներ միայն գործ դնել: Իսկ մենք, ընթերցող, պաշտպանվել ենք և շարունակում ենք պաշտպանվել կարանտինների կազմակերպութեամբ, իսկ եթէ այդ և չի օգնում, դուրս ենք հանում լատինական խոհանոցի բոլոր ղէնքերը—կապիկներ, միկոտորաններ, հաւեր, պարաշօկներ և այլն: Ըստ կարգին: Գիտ. հին ժամանակներում խօսք-

Այդ հարցի վրա երկարացնել խօսքը մենք աւելորդ ենք համարում, քանի որ շէյխի քարոզած մտքերը նոյն մտքերն են, որ մենք էլ մեր լրագրում տարիներէն ի վեր յայտնել ենք: Մեզ մնում է միայն ցանկանալ որ բացի Զանգեզուրի գաւառից նոյն մտքերը մահմետական հոգեւորականներին և երկանի նահանգներում: Մեզ մնում է ցանկանալ նմանապէս որ և մեր հայոց հոգեւորականութիւնը արձադաւաք տար շէյխի մարդասիրական և խելացի մտքերին և ինքն էլ իր ներկայացուցիչներին միջոցով նոյն մտքերը քարոզէր մեր երկրի այն ամեն տեղերում, որտեղ հայերը խառն են ապրում թուրքերի հետ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԵՐ ԿՐԱՑԻ ԺՈՂՈՎՐԴՆԵՐԻ ԿՐԹՈՒԹԻՒՆԸ

«Մեր դրացի ժողովրդները» վերագրով նախորդ յօդուածում ուղարկութեան հրաւիրելով մեր երկրի թուրք և ընդհանրապէս այլազան ազգաբնակչութեան վրա, յայտնել էինք հետեւեալ ընդհանուր պարզ միտքը, թէ անհրաժեշտ էր մեր երկրի ապագայի, նրա ընդհանուր բարօրութեան համար լուրջ կերպով վերաբերվել այսուհետև ղէպի մեր այլազան հարեանների սոցիալական կացութիւնը, աշխատելով ինչ միջոցներով հնարաւոր կը լինէր, ազատել նրանց փոքր առ փոքր այն անպատու պայմաններից, որոնց մէջ դարբերել էր վեր դրսով և և զոհնում են այսօր նրանք:

Այդ քայլն անելու համար մեզ հարկաւոր է նայալ մի պայման—մոռանալ այն ամենը, ինչ որ արդարեւ է տգիտութեան, մոլութեան և միջնադարեան մարդատեղութեան, այն ինչ որ արդարեւ է զանազան պատմական առասպել-նախապաշարմունքների,—մոռանալ ատելութիւնը ղէպի

բային համաճարակութեանը սահմանափակելու համար՝ մարդկանց յարաբերութիւնները աշխատում էին դադարեցնել կ'արան տին և իր միջոցով կարանտինները լինում էին թէ ցամաքի թէ գետերի վրա և թէ նաւահանգիստ ունեցող քաղաքներում: Առաջվայ ճանապարհների հաղորդակցութիւնը և մարդկանց յարաբերութիւնները շատ դարգացած չը լինելով յիշուի երբեմն յաջողվում էր առանձին տեղերը խիստ առանձնացնելով վարակւումից ազատել իսկ այժմ տեղական միջնադարյն յարաբերութիւնների առաջադիմութեան պատճառով, կարանտինական միջոցների դործադրութիւնը հետզհետէ սկսեց դժուարանալ և վերջին ժամանակներում կարանտինի հարցն անկի բարդացած: Կարանտինը միայն այն ժամանակ կարող է օգուտ տալ, երբ սահմանազրկում ամեն մի մարդու, ամեն մի առարկայ ղէպին: Ֆեկցիայի կարելի լինի եթէթիկել, իսկ հիւանդներին կանոնաւոր բժշկութեան, բայց մի այդպիսի դործողութիւն իրադրոծելի է արդեօք: Նոյն իսկ վերջինք օրինակ մեր սահմանները, հեռւոր է արդեօք այդ ահագին տարածութեան վրա մի որ և իցէ կանոնաւոր բժշկական տեսչութիւն ունենալ. որ տղէտ ճանապարհորդը կը համաձայնի սահման անցնելու համար ընտրել այն ինչ կամ այն ինչ միմանցից հարկը: Ընտրելով հետաւորութիւն ունեցող կայարանը, ուր միայն կարելի է բժշկական քննութեան ենթարկվել: Թէ այսպէս թէ այնպէս մինչև անգամ ամենալաւ սահմանափակել կարճակերպութեամբ մեր մեկօրին պատարագային վերահսկողութեան տակ ղենել: Բայց երբ որ և իցէ կերպ խօսքային մի միկորը անցնում է սահմանը, նա յաջող հանահամաճարակութեանը նայելով 24 ժամում կարող է

մեր դրացի աշխատի եղբայրները, ցոյց տանք օրինակով, դործով թուրքին, վրացուն, լեզգիին, թէ նրանց բարեկամ ենք, նրանց հետ մենք ուղում ենք լինել և ապրել իբրեւ մարդ, թէ մենք ունենք մի ընդհանուր դործ, թէ մեր տնտեսական, մտաւորական և բարոյական շահերը կապված են մ'արդ անուան հետ... Հակառակ այս սկզբունքների և հետևապէս մեր երկրի ամբողջութեան շահերին արտից ցատով նկատել ենք մեր մի առանձին տեսակ գործիչների կողմից ղէպի օտարազգիները ատելութեան զգացմունք արծարծող մի պարտաւելի ուղղութիւն: Այդ տմարդի է, այդ անբարոյական է, որի դէմ պէտք է այսուհետև ղինվի ամեն մի բարեմիտ հայ-քաղաքացի....

Մենք կարեւոր չենք համարում առ այժմ այսպիսի ընդհանուր քաղաքացիական փոխադարձ պարզ յարաբերութիւնների վերաբերեալ սկզբունքների մասին խօսելը և մի կողմը ղենելով հարցի ուրիշ կողմերը, մենք տրամադիր ենք այս անգամ խօսելու մի այնպիսի նիւթի վրա, որ մինչև այժմ ղիչ ուղարկութեան է արժանացել—այն է՝ մեր երկրի անխնամ թողնված աշխատող միլիոնաւոր մանուկների կրթութեան մասին:

Ում չէ յայտնել, որ մեր կովկասեան թուրք, հրէայ, լեզգի և այլն և այլն բազմաթիւ լեռնական ցեղերի անթիւ մանուկ—մատաղաշ սերունդը ղրկված է սկզբնական կրթութիւնից: Եթէ պատահում է որ թուրք կամ հրէայ երեխաներ են բերում յանձնելու մեր ծխակոն դպրոցներում, մենք նրանց մերժում ենք ընդունելու, չը գիտեմ մանկավարժական որ օգորմելի թէօրիայի սկզբունքների վրա հիմնված: Անցեալ տարի մի այդպիսի ղէպը էր պատահան, որը այն յիշում ենք, Ղուրբալի, որ լրագրութեան նիւթ էլ դարձաւ: Մենք կը յիշենք հետեւեալ ղէպը էլ:

Կովկասեան նշանաւոր հայ գիւղաքաղաքներից մէկում, ուր խառն ապրում են հայ և թուրք տարբեր, սրանից մի քանի տարի առաջ տեղական հայոց ծխական դպրոցներում ընդունվում են մի քանի թուրք երեխաներ և լեզգի պատմութիւնը սերունդներ տալ: Սրանից պարզ և բնում է, որ համաճարակութեան ազատվելու համար, անելի նպատակաւորմար է յոյս դնել ոչ թէ կարանտինների կազմակերպութեան վրա, այլ նոյն իսկ երկրի, քաղաքների, գիւղերի սահմանափակ հրոթեան բարեբանութեան վրա, որ և միակ միջոցն է ազատվելու խօսքային աւերիչ վնասներից:

Անցնենք այժմ հասարակական այն միջոցներին, որոնք խօսքային յատկութիւնների վրա հիմնված լինելով կարող են անկասկած օգտաւէտ լինել: Նախ և առաջ հարկաւոր է առողջապահական միջոցներով մեր քաղաքները, մեր բնակած տեղերը խօսքային տարածման և ամենա համար անընդունակ անել. նախապաշտպանողական միջոցներին, մենք վաղորդ պիտի դիմենք, քանի որ դրանց իւրապործելու համար բաւական ժամանակ է հարկաւոր, և երկրորդ՝ չը նայելով կարանտիններին և սահմանների վրա կազմակերպված բժշկական քննութիւններին, խօսքային կարող է անցնել այնպիսի մարդկերանց միջոցով, որոնք իրանց առողջ կարծելով այսպէս թէ այնպէս խօսքային ներս մուծմանը պատճառ են լինում: Խրաբանչիւր քաղաք և ընդհանրապէս իրաքանչիւր բնակավայր իր ժամանակին պիտի մասնաւոր ուղղութիւն կազմեն տնայիսի մարդկերանից, որոնք լաւ ծանօթ են տեղական նիւտ ու կացութեան և տօպոգրաֆիական պայմանների հետ: Այդպիսի հասարակաց առողջութիւն պահպանելու համար կազմակերպած ժամանակաւոր մասնագործներում պիտի մասնակցեն բժիկներ, տէխնիկներ, և ընդհանրապէս այլ և այլ մասնագիտութիւնների ներկայացուցիչներ, մասնաւոր այնպիսի անձինք, որոնք իրանց հա-

մում են, այդ երեխաներից մի երկուսը ցոյց են տալիս մինչև անգամ հաղորատու ընդունակութիւն զանազան առարկաների մէջ: Այդ թուրք երեխաները թողնելով հայ դպրոցը մտնում են կեանքը—մէկը դառնում է արհեստաւոր, միւսը մանրավաճառ և այլն. անցնում են մի քանի տարիներ և այդ նոյն հայ դպրոցների նախկին աշակերտները—արդէն առողջ երիտասարդներ—այսօր նորից դիմում են հայ ուսուցիչներին խումբին խնդրելով, ազաւելով որ սրանք շարունակեն իրանց դաս տալ, պարագլխով զանազան առարկաներ, իրանց հետ խօսեն, սովորեցնեն, «մարդ» դարձնեն... Այդ նոյն մարդիկ խնդրում են մի և նոյն ժամանակ իրանց կրտսեր եղբայրների համար, որ նրանք ընդունվեն մեր դպրոցներում... Հարկաւոր է արդեօք ասել, որ դա զովեւոր արժանի դործ է:

Իսկ ինչ վերաբերում է թուրք մանուկներին ընդունակութեան հարցին հայոց դպրոցներում, յայտնի է, որ մի օր և է հայոց ծխական դպրոցի մասնակալութեան մարմին իր իրաւունքների սահմաններում չէ գտնում այդ հարցի դրական պատասխանը: Սրանից յետոյ ուրեմն հարց է ծագում թէ ինչ պէտք է անեն կիսավայրերի, խրդալի ժողովրդի այդ «անխնամ» մանուկները, ուր գնան նրանք, և ինչ սովորեն...

Եթէ այդ անհամարելի վարժուների պատճառով միայն այն լինէր, որ այս կամ այն մանկավարժական սկզբունքները աչքի առաջ ունենալով հաւատարմի ենք ուղղում միայն այդ սկզբունքներին, այն ժամանակ մեզ դժուար չէր լինի առաջ բերել բազմաթիւ դժուարժեք և այդ տեսակ թէօրաները ոչնչացնող հիմնական արգումենտներ: Եթէ հետմեծական մանկավարժութիւնը (pédagogie comparée) հետզհետէ կատարելագործվելով հաստատուն, դրական և ոչ թէ մետաֆիզիկական հողի վրա կը դառնայ մի գիտութիւն՝ որոշ օրէնքներով և կանոններով վճռապէս հասարակական գիտութիւնների շարքը, որի համար և աշխատում են և մտածում գիտական սոցիոլոգ մանկավարժները, այն ժամանակ այս—այն անհատների տրամադրութիւնից առաջ և կամ, վերացական սկզբունքների վրա հիմնված մանկավարժական թէօրաները ողջ կը ցնդեն իրանց միակողմանի, չնասարկար ուղղութեամբ...

Կարծում ենք որ այդ հարցը աւելի պարզ է, քան թէ շատերը կարծում են. մերժել այս և այն օտարազգի երեխային ուսում տալը—մի անհերքելի, անհասկանալի յանցանք է: Մնում է ուրեմն մի կողմից աշխատել եղած դպրոցներում շատացնել թուրք և այլ օտարազգի երեխաների թիւը, որոնք մինչև այժմ հեռու են դպրոցներից, իսկ միւս կողմից, որովհետեւ դպրոցները

բում այդպիսիներին ընդունելը ունի մի քանի արգելաւոր՝ պատճառներ, աշխատել, որ որտեղ կարելի է, և որքան կարելի է շատ դպրոցներ բացվեն մեր հարկան օտարազգիներին մէջ:

Պէտք է բանալ մասնաւոր տարրական դպրոցներ այն տեղերում, ուր նոյն իսկ թուրքերը կամ հրէաներն իրանք են առաջարկում իրանց երեխաներին. այդ տեսակ դպրոցներում կը լինեն, ի հարկէ, նոյնպէս հայ երեխաներ. այդտեղ կաւանդվեն ուսուցման տարրական անհրաժեշտ գիտելիքներ և առարկաներ. լրաբանութիւն, բնագիտութիւն, ընդհանուր պատմութիւն և աշխարհագրութիւն, հայերէն, ռուսերէն և այլն: Բացի մասնաւոր դպրոցները նոյնպիսի տեղերում կարելի էր զանազան միջոցներով ազդել պատանի անիւ, համոզել այդ ժողովրդներին, որ իրանք էլ բանային թէկու՜ղ ուղղ. միջոցներով դպրոցներ, որոնց մէջ բնական է սկզբներում կը պահանջվին մտցնել իրանց մայրենի լեզուի դաստիարակութիւնը: Ինչ գործնական միջոցներ չէր կարելի հնարել, միայն այս բոլորը կատարելու համար մեզ պակաս է կամ և նախաձեռնութիւն:

Երբ մենք կաշտողներէնք մի քանի կենդանի օրինակներ կանգնեցնել, այնուհետեւ հեշտ կը լինէր մի նորութեան փոքր առ փոքր ընդհանրացումը մասնային մէջ... Իրաւ է, մենք մի քանի խոչնդոտների կը հանդիպէինք սկզբներում և մեր այս առաջարկութիւններն ու միտքը շատերը դուրսէ կը համարեն խիստ բաց ինչ փոխ, որ և է դադարաւոր, քանի որ լոկ գաղափար է, միշտ ցնորք է համարվել: Եւ արդարեւ, եթէ մի բան չը մտածենք, եթէ մենք չը սկսենք միջոցներ ինտամուտ լինել, անխաձեռնութիւնն ընդունելով մեզ վրա մի այնպիսի գործի համար, ինչպէս է մեր երկրի ընդհանուր տարրական կրթութեան գործը՝ այն ժամանակ մինչև երբ ուրեմն զրկված պէտք է լինեն մեր երկրի միլիոնավոր անխնամ և անսեղ մանուկները քաղաքացիական այս տարրական իրաւունքից...

Տ. Ա.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Նոյեմբերի 2-ին իր ճանապարհորդութիւնից Թիֆլիս վերադարձաւ Կովկասեան կառավարչապետ, իշխան Գոնիպոլսկոյ-Կորսակով:

Նոյեմբերի 1-ին փակվեց Կովկասեան գեղաւորտեսական—արդիւնագործական առաջին ցուցահանդէսը: Ամբողջ սրտից ցանկանում ենք, որ այդ ցուցահանդէսը վերջինը չը լինի: Ցանկանում ենք, որ Կովկասեան մայրաքաղաքը մեր գաւա-

վարները՝ այլ և բնակարանները, շորեղները գեղեցիկեցիկ անհետ համար հարկաւոր է առանձին առողջապահական խմբի կազմել՝ մարդիկ պատրաստելով, և ծանօթացնելով նրանց այդ նպատակին ծառայող բոլոր միջոցների հետ, որ խմբի պաշտօնականները հարկաւոր ժամանակ կառողջանային կատարել կանոնաւոր կերպով դեղինեցիկային վերաբերեալ՝ բժշկի բոլոր պատ-

լարեանները քաղաք կամ գիւղ և բնակած տեղեր՝ նրանց տարածութեանը և բնակչի-ների խտութեանը և կամ այլ յատկութիւններին նայելով՝ պիտի մի քանի մասերի բաժանվեն, և իւրաքանչիւր մասի սահմանաւոր տեսչութիւնը պիտի յանձնէ գործի նուիրած և տեղեակ անձինքներէ: Իւրաքանչիւր մասում շտապօրէն բժշկական օգնութիւն տալու համար վերև յիշած կայարանները պիտի բացվեն, ուր կարող են բժշկական օգնութիւն ցանկացողները, զիմիկ թէ գիւղեր և թէ ցերեկի կայարաններում բժշկիչները պիտի օրապահութիւն առնեն և նրանց ձեռքի տակ պիտի լինեն մի քանի ֆէլդշէներ և հիւանդապահներ, որոնք բժշկի բոլոր պատուէրները թէ հիւանդին խնամելու կամ ժամանակաւոր հիւանդանոց տեղափոխելու վերաբերմամբ նրանք անպայման պիտի կատարեն: Կայարանները պիտի մատակարարված լինեն հիւանդներին առաջին օգնութիւն հասցնելու և հիւանդանոց տեղափոխելու բոլոր միջոցներով: Կայարաններում հիւանդին օգնութիւն տալու համար վարձ չը պիտի պահանջվի: Այդ տեսակ կայարանները շատ օգտակար դարձնելու համար հիւանդներին առաջին օգնութիւն հասցնելու համար առանձին կայարաններ կազմակերպել, իսկ գետինը և բնակա-

ռական ուրիշ քաղաքներին հետ ապագայում բաղդ ունենայ տեսնելու ուրիշ մեծ, աւելի և աւելի հարուստ ցուցահանդէսներ, իբրեւ արտայայտութիւն հարուստ Կովկասի տնտեսական զարգացման:

Ամերիկայի Նիւ-Եօրկ քաղաքից մեզ գրում են, որ այնտեղի հայ գաղթականներին մի քանի ինտելիգենտ անձանց մէջ այժմ ձգտում է նկատվում կամ հայոց մի նոր օրգան հիմնել, և կամ արդէն գոյութիւն ունեցող հայոց հրատարակութիւնը լրացնել, այնպէս որ նա ամերիկական հասարակական կարծիքի ուղադրութեանը արժանանայ:

Անգաղար գանգաւորներ ենք լսում, որ հայոց դպրոցներում առհասարակ բնական գիտութիւնները կաղում են և այդ առարկան de facto չէ արժանանում դպրոցների վարչութեան և մասնակալութեան ժողովների լուրջ ուշադրութեան: Համարել է, շատ դպրոցներում այդ առարկայի վերաբերյալ անհետ կան, շատ տեղ ուսուցիչներ մի մասը այդ առարկան դրեկացնելու կողմն է, բայց և այնպէս բնական գիտութիւնները դեռ շատ հեռու են մեր դպրոցներում այն դրութիւնից, ինչ դրութեան մէջ որ այդ կարևոր գիտութիւնը պէտք է լինէր ամեն մի լաւ դպրոցական կաղմակիրպութեան մէջ: Չենք կարող մասնաւոր չանել դպրոցների դասաւանդութեան այդ պատասխանող կողմի վրա, հրաւիրելով հայոց վարժապետներին հասկացողներին քրտինք թափել դպրոցներում բնագիտական առարկաներն առաջ մղելու համար:

Վերջին օրերս թէ հասարակութեան մէջ և թէ լրագրներում լուրեր են շրջում Գրամատիկական Ակումբի վարչութեան մասին, իբր թէ ակումբը սկսել է գործել—բնակարան է վարձու, այս է անում, այն է անում, և այլն: Այդ լուրերը մեզ բաւական կասկածելի են երևում: Ակումբը այժմ մի վարչական կաղմակերպութիւն չունի, վարչութիւնը վաղուց է, որ կորցրել է իր լրագրութեան ժամանակակիցութիւնը: Անցեալ տարի, հոկտեմբերի 6-ին, կայացած ընդհանուր ժողովում չընտրվեց նոր վարչութիւն, այն պատճառով, որ նրա տեղ ընտրվեց մի յանձնաժողով, որը պէտք է ամենակարճ ժամանակամիջոցում հրաւիրէր նոր ընդհանուր ժողով և նրան առաջարկէր պեկուցում լրագրական գործի վերաբերմամբ, թէ ինչ միջոցներ պէտք է գործադրվէին նրան առաջ տանելու համար: Ընդհանուր ժողովի այդ վճիռը պարզ է մեր վերև յիշածը, այն է որ վարչութիւն չը կայ: Հետևապէս ոչ ոք էլ իրա-

անել է. դրա համար այդ խմբերի ծառայողներին պիտի կանխօրէն ծանօթացնել զեղինեցիկեցիկ անհետ համար հարկաւոր է առանձին առողջապահական խմբի կազմել՝ մարդիկ պատրաստելով, և ծանօթացնելով նրանց այդ նպատակին ծառայող բոլոր միջոցների հետ, որ խմբի պաշտօնականները հարկաւոր ժամանակ կառողջանային կատարել կանոնաւոր կերպով դեղինեցիկային վերաբերեալ՝ բժշկի բոլոր պատ-

անել է. դրա համար այդ խմբերի ծառայողներին պիտի կանխօրէն ծանօթացնել զեղինեցիկեցիկ անհետ համար հարկաւոր է առանձին առողջապահական խմբի կազմել՝ մարդիկ պատրաստելով, և ծանօթացնելով նրանց այդ նպատակին ծառայող բոլոր միջոցների հետ, որ խմբի պաշտօնականները հարկաւոր ժամանակ կառողջանային կատարել կանոնաւոր կերպով դեղինեցիկային վերաբերեալ՝ բժշկի բոլոր պատ-

ունք չունի այժմս ակումբի անունով գործել, մինչև որ քննաթաղախ յանձնաժողովը չը տրորի իր աչքերը և յիշի իր վրա դրած պարտականութեան մասին և որքան կարելի է շուտ հրաւիրէ ընդհանուր ժողով ու նրան զեկուցում տայ: Այդպիսով վերջ կը տրվի Ակումբի անունից գործող ինքնակոչներ զործուհեւութեան:

Առաջիկայ տարվայ համար ժողովրդական լուսաւորութեան միջնորդութիւնը ծախսերի հետեւեալ հաշիւն է կազմել. համալսարաններին—3,150,500 ռուբլի. գիմնադրանքներին, պրոգրիմագիաներին և ուրիշ միջնակարգ դպրոցներին—6,067,278 ռուբլի. լեւալական և արդիւնաբերական դպրոցներին—2,203,447 ռուբլի. գաւառական և քաղաքային դպրոցներին—1,665,296 ռուբլի. ուսուցչական ինստիտուտներին և սեմինարիաներին—1,232,135 ռուբլի:

Ամերիկայի Միացեալ-Նահանգների Նիւ-Եօրկ քաղաքից մեզ, ի միջի ալոց, գրում են, որ այս օրերս այնտեղ կայացած հայ գաղթականների ժողովում օգոստոս Գ. Գարբիէլեան մի երկար ձեռն խօսեց: Երբ այդ ժողովի և այդ ձեռքի մասին ամերիկական լրագրները տեղեկութիւններ հաղորդեցին, Վաշինգտոնի թիւրքաց դեսպան Մալոյեյի պէն «Նիւ-Եօրկ-Հերալդ» լրագրում պատասխանեց պ. Գարբիէլեանի նամակին մի պաշտօնական գրութեամբ: Դրա մէջ թիւրքաց դեսպանը ի միջի ալոց ասում է. «Թող ամեն ոք լաւ գիտնայ, որ վեհապետ ուղիքներ իւրաքանչիւր չէ դնում իր հպատակների մէջ՝ ինչ կրօնի և պատկանելին: Այդ հոգով են գրած միշտ վեհապետի շրջաբերականները, որի բարձր մտքի և բնաւորութեան ամբողջութեանը վկայած են պ. պ. Հէվիլի, Գորապետ Վալլաս, Ս. Քոքս և Օ. Սթրաս, որոնց մօտ և համարձակում եմ ուղարկել նամակի հեղինակին»:

Երգրումից մեզ գրում են. «Սրանից մի քանի ամիս առաջ չորս թուրք մօլլաներ վաճառելով իրանց դոյքը, տեղափոխվեցան դէպի Լեբնիկա: Ուրիշ շատ թուրք ընտանիքներ նոյնպէս թողնելով Երգրումը գնացին բնակութիւն հաստատելու Հալլպոլում՝ մասնաւորականութեան այդ կենտրոններից մէկում: Նոյն երկրի մասին մի քանի փաստեր են հաղորդել և ուրիշ լրագրներ:

Նոր տարին մօտենում է, և անա շատերը պատրաստութիւններ են տեսնում օրացոյցներ հրատարակելու: Եւ այս ամիսներում հայերէն լեզուով լոյս տեսնող գրքերը մեծ մասամբ

նպատկ և տրտաքնոց, ուր կղղաւորը թափված է, պիտի անշուշտ զեղինեցիկեցիկ երթարկել. է-ժամագին առարկաները կարելի է աչքի: Խօսեալին համաձայնութիւն ժամանակ չափազանցած լուրերի առաջին տեսնու համար՝ խօսեալին զեղինեցիկեցիկ գրութիւնը պիտի լրագրենք:

Ան այս են բոլոր հասարակական միջոցները որոնք պիտի գործադրվեն, թէ խօսեալին համաձայնութեան ինքնագործութիւնը կարող է համաձայնութեանը սահմանափակել և նրանից առաջացած վնասը մի-նիմուս հասցնեն: Այդ պատճառով ընթերցող, ամեն մի ժողովուրդ միշտ պատրաստ պիտի լինի այսօր չէ վաղը, վաղը չէ միւս օր կամ մօտեկ ապագայում, շուտ թէ ուշ հանդիպելու վրա տանգ պատուող հիւրին. իր շահերը հասկացող ամեն մի հասարակութիւն նախապատրաստ պիտի լինի, պիտի թոյլ չը տայ, որ հիւանդութիւնը իր աճելու և բազմանալու համար նպատակաւոր մար պայմաններ գտնէ երկրի, քաղաքների և գիւղերի մէջ, և եթէ դժբաղդութեամբ, անակնկալ ճանապարհով այդ անկող հիւրը աչքի է իրան, պիտի աշխատել որքան նիւթական կարողութիւնը թիւլաղում է՝ սահմանափակել նրանից ստացած վրնասակար հետեւեղները:

Խօսեալով հիւանդին մինչև բժշկի դաշն օգնութիւն տալու մասին հետեւեալ անգամ կը խօսենք:

Բժշկապետ Տէր. Գրիգորեանց (Թիֆլիսից)

օրացոյցներ են: Զօրեղ փաստ մեր գրականութեան հարստութեան համար:—Չենք կարող այդ առիթով չը զգուշացնել այդ օրացոյցները հրատարակելու, որ ազատեն իրանց հրատարակութեանը զանազան տեսակ երազանքները, պատճառական նախադրութիւնները և ամեն տեսակ դատարկութիւնները:

Արտասահմանի հայոց մի լրագիր գրում է. «Կ. Պոլսէն մեզ հասած լուրերը շատ տխուր կը ներկայացունեն այն 50-ի չափ մէկերնորի նկատման վիճակը, որոնք Կ. Պոլսի եկած էին Մուսա պէյի գէմ բողբոջու համար»:

Մեզ հաղորդում են Կ. Պոլսից, որ Պոլոս վարդապետ Նաթանանի աղքատ վիճակը մի փոքր դարմանելու համար Կ. Պոլսի մի խումբ երիտասարդներ հանգանակութիւն են բացել, ի նկատի ունենալով, որ ծերունի վարդապետը ոչ մի տեղից դրամական օգնութեան յոյս չունի:

ՂԱՌԱՅԻՑ մեզ գրում են հոկտեմբերի 26-ից. «Հոկտեմբերի 24-ին, սկսած այն օրից, երբ փոստը Ղուբայի և Գերբնդի ճանապարհի վրա կողոպտվեց աւազակներից, մի բոլորովին ուրիշ վիճակ է ընդունել գաւառը: Միւշկիւրը, այդ սարսափելի ապստամբութեան աւազակների, գտնվում է մի տեսակ փութալան խողարկութիւնների տակ: Այնտեղ են և տեղի գաւառապետը Միւշկիւրի իր երկու պրիստաներով, հաղարաչափ մարդկանցով, կողակներով, գիւղացիներով, այնտեղ է և զինուորական մի սպայ ութսուտնաչափ սոյգաւորով: մինչև օրս չեն վերադարձել խաչմաղի խոտ անտառներից, որտեղ այդ գիւղի ճանապարհի վրա ընկած ամեն մի քօլ, ամեն մի ծառ հակում է զիշեր ցերեկ պահապան կողակը, և գրահարութեան գիւղացին: Անցողաբաժնի անողին հայոց ու փորձ են անում աւազակների օրտեղ լինելու և կամ նրանց ուր երթալու մասին: Հսկողութիւնը խիստ է»:

Արտասահմանի հայոց մի լրագիր հաղորդում է որ թիւրք մինիստրները որոշումը՝ արգելելու երգումով վիճակները արտահանելը, որովհետև ունենալ շատ աղքատ էր եղել, և սովի վտանգ կայ: Հաղորդելով այդ լուրը լրագիրը ցուցն է յայտնում, որ մի այդպիսի բերրի երկիր անկարող է նոյն իսկ իր բնիկ ժողովուրդը կերակրել:

Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսի հայոց օրիորդական դպրոցներում, ինչպէս և շատ գաւառական դպրոցներում, ձեռն աղոթքը ընկած դրութեան մէջ է: Նոյն իսկ այնպիսի դպրոցներում, ուր հինգ տարեկան պատանիներ կայ, այդ առարկան այնքան թույլ են անցնում, որ աշակերտուհիները բացի դանդաղ մօզային և շաւար-լուծի ան ծառայող իրենցներէր, անկարող են իրանց ձեռքով պատրաստել տան տնտեսութեան համար ամենանհրաժեշտ իրեղեններն անգամ: Այդպիսի մի առարկայի ընկած դրութիւնը պատիւ բերել օրիորդական դպրոցին ի հարկէ չէ կարող:

ԲԱՊՈՒՅՑ գրում են մեզ հետեւալը: «Զանազան տեղերից Բաղու եկած ու անդործ մնացած մարդկանց թիւը աչքի ընկնելու չափ շատ է: Այդ յուսանատ թշուառները գուրկ են ապրուստի ամեն միջոցներից: Այդ եկողները մինչև այժմ խաբւում են Բաղուի հարստութեան անցնալ հոգալով: Ռուս գաղթականների հոսանքն էլ Բաղուի վրայով՝ դէպի Անդրկասպիան երկիրը և կարսի նահանգը շատ մեծ է: Ամեն օր մի քանի անգամ պատանելով այդ մուրացող մարդկանց խմբերին, միշտ լսում էք ПОМОГИТЕ ПЕРЕСЕЛЕНЦАМ սովորական խօսքերը»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԻՒՄՈՒՅ

Կ. Պոլսի, 26 հոկտեմբերի

Վիշէլմ կայսրը երկի մեկնեցաւ Պոլսէն. Պոլսի այն խնդիրներն, որոնք անմիջական վերաբերութիւն չունեն մեր ազգային գործերու հետ, նիւշ չեն կազմեր մեր թղթակցութիւններու, հետեւա-

բար ոչինչ կը գրենք այն փառաւոր ընդունելութեան մասին, որ տեղի ունեցաւ ի Պոլսի գերմանական կայսրի. այն կէտերը միայն կընտրենք, որք առնչութիւն ունեն մեզ հետ: Մեր պատերազմարանն ոչ ոք ներկայացաւ Վիշէլմ կայսրի Պատրիարքը կողմէր երթալ բարի գալուստ մաղթել, իւր հետ ունենալով խրիստոնէ և Նար-Պէյ սրբազանները. սակայն պատշաճ համարեցին նախ արքունի պալատէն արտօնութիւն ինդրել. պատրիարքարանից Գրան մօտ գործակատարը դեռաց այդ արտօնութիւն խնդրել: Պատասխան տրուեցաւ թէ՛ կայսրը ընդունելութեան ծրագրին մէջ անցնած չէր կրօնական պետերու այցելութիւնը. այս մեթոդական պատասխանին վրայ բնականաբար մեր պատրիարքը չէր կարող ինքնարերաբար երթալ Սուլթանի պալատէն և ներկայանալ անոր հիւրին: Սակայն կը ըսուի թէ՛ հաղորդած է Վիշէլմին թէ՛ հայոց պատրիարքը փափագած է գալ և իր յարգանքներն մատուցանել:

Վիշէլմ կայսրը Պոլսի մէջ հայ եկեղեցականներ տեսնելու առիթ ունեցաւ առիթական Վաթիւրի վրայ, ուր երբ այցելեց՝ հայ վարդապետ մը հանդերձ քահանայներով և Երեմիայի ընդհառաջ գնացած է անոր, ինչպէս նաև յունական եկեղեցւոյ ներկայացուցիչներ: Խափառարի բարձունքը գիւղ տեղ է. այսպիսի բաներ կրնան պատահել:

Ուրիշ հայեր ալ տեսնելու առիթ ունեցաւ Վիշէլմ, կայսրուհոյն պատուի երկու տիկիններն հայ էին. մին Տատան Արթին փայլալ աղջիկը, տիկին Եղեմէ Նազախան, և միւսը դատական գործոց նախարարութեան օգնական Վահան Էֆենդիի աղջիկը, օրիորդ Արաքսի Տիկին Նազախանը քաջ ֆրանսերէն գիտէ, օր. Արաքսի շատ լաւ գերմաներէն գիտէ. կայսրուհուն թարգմաններն եղան, մասնաւոր սովորներն հարէմին մէջ: Գէթ ասոց ընտրութիւնէն Պոլսի հայոց ազգային անձնաթիւթիւնը գոհացում գտաւ. ամբողջ Պոլսի մէջ միայն հայ չըլաններու մէջ է որ կարելի կըլլայ գերմաներէն գիտող հայունքները գտնել, որք միանգամայն բարձր ընկերութեան մէջ մտնելու կատարելագույն ընդունակ են: Երկու հայուհիներու թողած տպաւորութիւնը այնքան լաւ եղած է, որ սուլթանը իր գոհունակութիւնը յայտնած է և թիւրք մամուլն ալ իր գովաւորները չէ խնայած:

Իսկ եթէ քիչ մ'ալ աւելի գործնական չըլաններու մէջ մտնեք, պիտի տեսնեք, թէ՛ կայսր ու կայսրուհի իրենց հանգստի միջոցին հայ ձեռագործներէ չըլանապատած էին: Կայսերական անկողնի և գիշերային զգեստներու ամեն պիտուքներն հողա-ցուցան հայոց Բերայի աղջկանց արուեստանոցէն: Նիւթական շահ արուեստանոցին, համբաւ, —անաւարակ արդիւնքն էր կարող տեսնել ի վեր մտադիր էինք այդ արուեստանոցը ծանօթացնել մանրամասնօրէն, բայց առթի մը կը սպասէինք, այս առիթը ներկայանալով, ուրիշ թղթակցութիւն մը կը նուիրենք աղջկանց արուեստանոցին:

Գոցենք ալ ևս այս գլուխ:

Ազգ. Ժողովը պիտի գումարի վաղը. օրակարգի մէջ չը կայ այնպիսի խնդիր մը, որու վրա նախապէս խօսելու հարկ մը տեսնենք. սակայն կըլթական և եկեղեցական խնդիրներն հաւանօրէն վաղը խնդրի առարկայ կըլլայ:

Մեր երեսփոխաններու մէջ լուր մը տարածուած էր թէ՛ կառավարութեան կողմէ դժգոհութիւն յայտնուած է Ազգ. Ժողովի յաճախ գումարութեան մասին, և կարծիք կար թէ՛ այս անգամ պիտի յետաձգուի Ազգ. Ժողովի գումարութեան, սակայն այդ կարծիք իրականութիւն չեղաւ: Արդարեւ պատրիարքարան այդպիսի իմաստով թուով մը հասած է դատական գործոց նախարարութեան կողմէ, սակայն մէջը օրոշ կերպով չէ ըսուած Ազգ. Ժողովի համար: Ազգ. Ժողովը իր գումարութեան մէջ երբեք խնդիր մը չէ ունեցած որ կառավարութեան դժգոհութիւն պատճառէ: Ազգ. Ժողովի բոլոր խնդիրները մեր ներքին խնդիրներն են, այսպէս կըլթական, եկեղեցական և ալ խնդիրներն թափ թէ՛ դատական գործոց նախարարութեան դժգոհութիւնը է ընդդէմ համագումար Ժողովին, որ ամուսնական խնդիրներու համար գումարութեան յանձնարքը դրաւ: Ուրիշ խնդիրներով Սակայն պէտք է նկատել թէ՛ եկեղեցական համագումարը ժողովը բոլորովին անկախ մարմին է. հայոց եկեղեցականները կրնան ամեն ատեն ժողովը և դրա-

ղի իրենց ժողովրդի հոգևոր պետերու մասին. ոչ ոք կրնայ զիրենք արգելել պատրիարքարան կամ եկեղեցի մտնել, և երբ եկեղեցին կը մտնեն, հիւ ինչ կրնայ ըսել:

Սակայն պիտի ըսուի թէ՛ իրենց գումարութեան մէջ ոչ թէ՛ հոգևոր, այլ քաղաքական խնդիրներու վրայ կը խօսեն, սակայն այնքան ի մի ձուլուած են քաղաքական և կրօնական խնդիրներն, զորս իրարմէ բաժանել անհնարին է գրեթէ:

Բայց դատական նախարարութիւնը արգելէ թէ՛ ոչ, արդէն վերջացած խնդիր է. համագումարի յանձնարարութեամբ պատրաստած է իր տեղեկագիրը, որը պիտի ընտուի այս օրերս վերջին անգամ և սրբազրութիւններն ըլլալէ վերջ պիտի ներկայացնուի Սուլթանին:

Պատրիարքը պիտի ստորագրէ թէ՛ ոչ, պատրիարքը պիտի ներկայացնէ թէ՛ ոչ: Խնդիրներ են, որոց վրա կը խօսուի: Պատրիարքը ստորագրէ թէ՛ ոչ, ներկայացնէ թէ՛ ոչ, մեր եպիսկոպոսները պարտաւոր են ամեն բան իրենք ընել:

Սակայն չենք կարծիք օր պատրիարքը մերժէ: զայն ստորագրել կամ Սուլթանին ներկայացնել: Այդ խնդրագրի զլխաւոր կէտն այն է թէ՛ առաջնորդական աթոռներէն Պոլսի բերել տալով գրեթէ բոլոր առաջնորդները, ժողովուրդը կը մնայ անխնամ, անգլուխ, և պատրիարքը մը որ պատասխանատու է հանդէպ կառավարութեան իր ժողովրդի համար, ինչպէս կրնայ հակել իր ժողովրդին, երբնա զօրք է առաջնորդներէ, որք պատրիարքի ներկայացուցիչներն են: Պատրիարքը պատասխանատու է հանդէպ կառավարութեան իր բոլոր եպիսկոպոսներուն, վարդապետներուն, քահանաներուն համար, և միանգամայն անոնց երաշխաւորն է, ուստի կառավարութիւնը կամ պէտք է վստահի պատրիարքին, և եթէ չը պատահիր, պէտք է զայն բացառականապէս յայտարարէ, որպէս զի աղքէ ալ դիտնայ թէ՛ ինչ ընելու է:

Այսպիսի նկատումներով գրուած խնդրագիր մը բնականաբար շատ ուժեղ կըլլայ, երբ ստորագրուի պատրիարքէն. մենք բաւական պատճառներ ունենք կարծելու թէ՛ պատրիարքը չը պիտի բաժնուի իր եկեղեցականներէն, իսկ եթէ բաժնուի, ինչպէս օրինակ կը կարծեն, հետեւութիւնը լաւ չըլլար Տ. Խորեն պատրիարքի համար:

Ժամանակը այսօր ինչ կը պակսի խօսել օրուան ուրիշ կարեւոր խնդիրներու վրայ, որպիսին է Մուսա պէյի դատը, որու մասին քանի մը սխալ տեղեկութիւններ հրատարակուած են անգլիական լրագիրներին մէջ և որք թարգմանուած են «Մըշակ» մէջ ևս: Խօսել նաև չեմ կարող այսօր գրական ակումբի մասին. այդ ակումբին համար ընտրուեցան ուսումնական խորհուրդին մի քանի անձնաւորութիւններ, որպիսիք են՝ Խորեն Նար-Պէյ սրբազան, Արուստեանց սրբազան, Մկրտչան տէրայր, Մարկոս Աղաբէգնան, Մամուրեան և այլք, որք պիտի դնեն հայկական կաճառի մը հիմնաքարն:

Այս ամենուն վրայ յաջորդ թղթակցութիւնով:

Հայկակ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Պարիզի համալսարանային ցուցահանդէսը փակվեց մեծ շուքով: Ֆրանսիական ամբողջ մասնուր ոգևորված կերպով է խօսում ցուցահանդիսի անադին աջողութեան մասին:

—Նիւ-Եորկից գրում են, որ գաւառական ընտրութիւնների ժամանակ զլխաւոր աջողութիւնը աւանդականապէս կ'անցնէր կողմն է:

—Գնեհրալ Բուլանտէ հրաւիրագրեր է ուղարկել իր համալսարաններից 51-ին՝ զալ Զերսէ, ընդհանուր ժողով գումարելու: Զբաղմունքներից 26-ը մերժել են Բուլանտէի առաջարկը:

—Վիշէլմ կայսրը Բերլին դառնալիս պէտք է տեսնուի Ֆրանց-Յոսէֆ կայսրի հետ:

—Վիեննայից գրում են, որ այնտեղ շատ դժն են պրինց Ֆերդինանդ Կոբուրգեանի գահական ծառից:

—Պարիզի ցուցահանդէսի փակվելու օրը այնտեղ եղել է կէս միլիոն ժողովուրդ: Բաղմունքները այնքան խուլած էր, որ հանրապետութեան նախագահը ցուցահանդէսը զալով անկարող եղաւ անցնել անգլիան բաղմունքին միջից, և ստիպվեց յետ դառնալ՝ լսելով Վիեննէ հանրապետութիւն, կեցցէ կարծիք գոչիւնները:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Պեշտի զինուորական առեանը այս օրերս դատարարաց ըսան տարվայ բանտարկութեան մի ուն Մօրեցին, որը մեղադրվում է հայրասպանութեան համար: Այդ Մօրեց օպանել է իր հօրը, ցանկանալով նրա անտանելի բնաւորութիւնից ազատելու իր մօրը և քրոջը: Մրանից երկու շաբաթ առաջ, երբ դատարանը դատարարաց Մօրեցին քսան տարվայ բանտարկութեան, նրա մայրը և քոյրը յուսահատվելով, անձնասպանութիւն գործեցին...:

Վերտմեբրդի «Աղջիկները ընկերութեան» նախագահուհին՝ օրիորդ Գասա այս օրերս դատարարաց 5 տարվայ բանտարկութեան: Նա մեղադրվում է իր նորածին երախային սպանելու համար:

Ֆրանսիացի կողմից աննախաձեռնի գրութեան մէջ գտնվող իտալական կառավարութիւնը այս օրերս ամբողջ 5 միլիոն ֆրանկ յատկացրեց այն գործարանի շինութեան համար, որտեղ պէտք է պատրաստվի ծով չունեցող վառօդ:

Յայտնի է, որ Պարիզում, այլ և ալ ընտրութիւնների ժամանակ լուր են տեսնում հաղարաւոր ընտրողական աֆիշաներ: Վերջին պարլամենտական ընտրութիւններից յետոյ Պարիզ բաղաքը ստիպված էր 150 հազար ֆրանկ ծախսել՝ քաղաքի պատարը ընտրողական աֆիշաներից մաքրելու համար:

ՄՇԱԿԻ՝ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՑ

ՊԵՏԵՐՈՒՐԳ, 1 Նոյեմբերի: Թագաւոր կայսրը, զեղարուեստներին նպաստող կայսերական ընկերութեան անունով տուած Բարձրագոյն հրովարտակով յայտնում է Բարձրագոյն բարեհաճութիւն ընկերութեան օգտաւէտ գործունէութեան համար այդ ընկերութեան ղեկավարութեանը յանձնած նկարչական դպրոցի զարգացման վերաբերմամբ, և հրամայում է ապա պետական գանձից 100.000 ռուբլի դպրոցի դիւրը ընդարձակելու համար, համեմատ դպրոցի աղջեցութեան տակ զարգացող զեղարուեստական և արդիւնագործական կրթութեան պահանջներին: Հրովարտակի վերջում աւելած է. «Թող Մեր այդ պարզը ծառայէ որպէս՝ քաջայեղութիւն գոյոցի գործունէութեան զարգացման համար, յօգուտ հայրենիքի արդիւնագործութեան, որի առաջադիմութիւնը այդքան մօտ է Մեր սրտին, քանի որ նրանում Մենք տեսնում ենք Մեր հայրենիքի ժողովրդական բարօրութեան զարգացման գրաւականներից մէկը»:

Նկարչական դպրոցի գոյութեան յիսնամեայ յօբելեանին ներկայ էին ներկայ կայսերական Մեծութիւնները: Մաղթանքներից յետոյ Նոյն Մեծութիւնները հետացան և ապա սկսվեց Եղեմէի Մակիմիլիանովիչա Օլդէնբուրգեան իշխանուհու նախագահութեամբ յօբելեանի հանդէսը: Գեղարուեստներին նպաստող ընկերութեանը տուած Բարձրագոյն հրովարտակը կարգաց ֆրանսիացի մինիստրը: Ստացված են բազմաթիւ ուղերձներ և հեռագիրներ նկարչական դպրոցի յիսնամեայ յօբելեանի առիթով: Մի քանի անձանց, դպրոցի վերաբերմամբ իրանց օգտաւէտ գործունէութեան համար՝ տուած են պարգևներ:

ՊԵՏԵՐՈՒՐԳ, 1 Նոյեմբերի: Ռուսաց արտիլերիայի 500 տարվայ գոյութեան յօբելեանի տօնախմբութիւնը կը կատարվի նոյեմբերի 8-ին, Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլաևիչի անունաւոր զուլութեան օրը:—«Новое Время» հաղորդում է, որ պետական խորհրդին ներկայացվելու է զիւղացիական ընկերակցութիւնների կազմակերպութեան ծրագիրը, որը նպատակ ունի միջոց տալ գիւղացիներին հողային սեփականութիւններ ձեռք բերելու: Այդ ընկերակցութիւնները հիմնված կը լինեն սովորական առևտրական ընկերակցութիւնների կանոնների վրա և ոչ թէ համեմատ 19 փետրվարի 1861 թվի գիւղացիական կանոնադրութեան:—Նոյն լրագիրը հաղորդում է, որ պետական խորհրդին ներկայացվելու է մի ծրագիր, որի նպատակն է կազմել մի ընդհանուր թոշակատու արկղ աղգային Ռուսաստանի միլիտարութեանը եմթարկված քաղաքային և գիւղական դպրոցների վարձարեւների և վարձուհիների և նրանց ընտանիքների համար: Թոշակ ստանալու իրաւունքը ձեռք բերելու համար դիտարկութիւն կայ սահմանել երեք ժամանակա-

միջոց, այն է 15, 20 և 25 տարվայ ժամանակամիջոցը

ՊԱՐԻՑ, 1 նոյեմբերի Պատգամաւորների ժողովը բացվեց 2 ժամ 30 րոպէին Մոմարարի շրջանի հինգ պատգամաւորների բաւական պատգամաւորների հետ միասին եկան Բուրբոնեան պալատը, որպէս զի բողոքեն Բուրբոնէի հապաւորող ժաֆֆրենի ընտրութեան դէմ Նախագահը երկու քարտուղար ուղարկեց՝ բողոքը ընդունելու համար ժողովի ժամանակաւոր նախագահ ընտրված է Յուլէն Մեծ անկարգութիւններ չեղան. ձերբակալվեցան մինչև 160 մարդ, որոնց թիւում և Գերուլէզ յատկապէս պոլիցիային չը հնազանդվելու համար Ձերբակալվածներին չուտով բաց թողնելին:

ՀՈՍՄ, 1 նոյեմբերի Տանգեր ուղևորվեցան երեք նաւ, որոնց հետ ուղարկված է մի վերջնադիր, որով պահանջվում է որ 48 ժամվայ ընթացքում բաւարարութիւն տրվի իտալական ներկայացուցչին վերադարձնելու համար: Եթէ բաւարարութիւն չը տրվի, այն ժամանակ կը սկսեն ամբակոծել Տանգերը:

ԻՆՍՊԻՐԻԿ, 2 նոյեմբերի Ֆրանց-Յովսէֆ կայսրը կայարանում սպասում էր պալատական դռնացիի գալու, և երբ գնացքը հասաւ, իսկոյն նա մտաւ վազոնը և ջրմ կերպով ողջունեց Վիլհէլմ կայսրին և նրա ամուսնուն: Կայսրուհին չուտով առանձնացաւ ննջարան-վազոնը: Երկու կայսրները առանձնացան և նրանց մէջ սկսվեց տաք խօսակցութիւն:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 2 նոյեմբերի Լիւսաբոնի միսիայի քարտուղար Կազարինով նշանակված է Բերլինի գլխաւոր հիւպատոս Կուզնեցովի փոխա-

րէն, որը նշանակված է հիւպատոս Սոկոլովուս Եսասայի գլխաւոր հիւպատոս Օբերմիլէր, երբ խնդիրը համաձայն արձակված է պաշտօնից: Կազմված է մի առանձին յանձնաժողով, որը պէտք է վերաքննի կլասիական գիմնադրանքի դաստաւութեան ծրագիրը: Ենթադրութիւն կայ առանձին ուշադրութիւն դարձնելու դաստաւութեան մեծ ծախսով: համաձայն առանդող առարկաների թւի: Երէկ տպագրվեցան «Сборникъ Тарифовъ» հրատարակութեան մէջ, իսկ նոյեմբերի 15-ից պէտք է գործադրութեան մէջ մտնեն հազաւատիկների նոր տարիֆները: ներքին հաղորդակցութեան համար:

ՎԻԵՆՆԱ, 3 նոյեմբերի Գալլիցիայում, այսօր սկսվեց մի յուզիչ գործ 65 մարդու դէմ, որոնք պարագում էն եղել զաղթականների առևտուրով: Հարստահարողների այդ խումբը կառուել է երկաթուղային ծառայողներին, ժանդարմներին և ֆինանսային վարչութեան պաշտօնեաներին, նոյն իսկ շրջանապետը ուժերով ծառայում է եղել այդ խմբին, ստանալով 1.000 դուլդէն տարեկան Սյէ խմբին է պատկանում նոյնպէս և պոլիցիական ծառայողը: Գալլիցիացի, բուսնիացի, սլավոն, և ունդարացի խեղճ գիւղացիները ամեն նաւանիսիղճ կերպով հարստահարվել են այդ օրկականների ձեռքով: Մեղադրական ճառում հաստատվում է, որ այդ խումբը ուղարկել է Ամբրիկա 5799 Աւստրիայի հպատակներ, որոնք զինուորագրութեան պէտք է ենթարկվելին:

Խմբագիր-հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

Անհրաժեշտ եմ համարում հրապարակաւ յայտնել, ի զիտութիւն ԿՈՎԱՍՍԵԱՆ և ԱՆԴՐԿՈՎԱՍՍԵԱՆ պատուելի ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ, որ դարձեալ սովորականին համեմատ ընդունում հմայնաւորական պայմանով վաճառելու զանազան ապրանքներ՝ նախապէս տալով և ԱՎԱՆՍ: Նաեւ կատարում եմ ապրանքներ գնելու և ուղարկելու պատուէրներ: Ցանկացողները պայմաններին մասին կարող են զիմէլ ինձ այս հասցեով. ОДЕССА, М. МУРАТОВУ, իսկ թիֆլիսում տեղեկանալ պ.պ. եղբ. ՄՈՎԱՆՍԵԱՆՑ և ընկ. բանկային գրասենեակում:

Մ. ՄՈՐԱՒԱՆՑ
1—8 (Ծ.)

ՄԻ հոյ ԵՐԻՏԱՍԱՐԳ, որը արտասահմանեան մի դպրոցում ուսում առած է, որը հմուտ է անգլիերէն, ֆրանսերէն, հայերէն և թիւրքերէն լեզուներին, ցանկանում է թիֆլիսում կամ յիշեալ լեզուներին մասնաւոր տնեւում դաստաւելին, կամ որ և է առեւտրական հիմնարկութիւններում հաշաւապահութեան և օտար լեզուներին գրագրութեան պաշտօն վարել:

Հասցէի համար զիմէլ կամ «Մշակի» խմբագրութեանը, կամ պ. Ալէքսանդր Ստեփանեանցին, Զուբալովի քարվանսարայում:

5—10

ՄԻ գերդաստան
ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ԳԻՇԵՐՈՐԹԻԿՆԵՐԻ
Գիմել հետեւեալ հասցեով. Սոլովա՛ Գանովա՛ փողոց, տուն Շաղինեանցի № 25.
10—10

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԻՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱԽԱՍԱՐԿԵԱՆԻ
(Կուկիա, Վորոնցովի արձանի հանդէպ)
Հիւանդներին ընդունում են ամեն օր
ԱՌԱՌՈՏՆԵՐԸ
ԲՈՒԳՎՈՎԱԿԻ—10—11 ժ. ներքին, երկխոյոց և կանանց յ.
ԿԻՆԻՔԻՇԻ ԻՍԱՀԱԿԵԱՆՑ—11/2—12 ժ. կանանց և երկխոյոց յ.
ԲԵՆԿԵՎԱԿԻ—11—12 ժ. ականջի, կոկորդի, քիթի յ. և սիֆիլիսի (վիրարութ. և ատամագաւի)
ԱՐՏԵՄԻԵՎ—12—1 ժ. երեքշաբթի, ուրբաթ և կիրակի, կանանց յ.
ԿՈՐԱՊԵՏԵԱՆՑ—12—1 ժ. ներքին և երկխոյոց յ. բացի կիրակի:

ԵՐԵՎԱՆԵՐԸ
ԳԱԴՈՄԱԿԻ—5 1/2—7 ժ. կաշուի ցաւերի և սիֆիլիսի.
ՓՈՒՂԻՆԵԱՆ—5 1/2—6 1/2 ժ. ներքին, երկխոյոց և ջրային յ. (էլեկտրօտերապիա):
ԲԵՆԿԵՎԱԿԻ—7—8 ժամ.
Հիւանդանոցում են մանկաբուժուհի Երևանցի ան և Արտաղես ան:
ճար—50 կ. Համալսոյճի (կոնսիլիումի) համար փոխադարձ համաձայնութեամբ:
Հիւանդանոցի փոխ-վերատեսուչ ԲՈՒԳՎՈՎԱԿԻ

ՊԵՏՐՈՎԱԿԱՑԱ ԱԿԱԳԵՄԻԱՆ ԱԻԱՐՏԱՆ
ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԳ
ՑԱՆԿԱՆՈՒՄ Է ՄԱՍՆԱԻՐ ԴԱՍԵՐ ՈՒՆԵՆԱԼ. համաձայն է պարապել գիմնադրական բոլոր առարկաներից, բացի հին լեզուներից: Համաձայն է և կրկնութիւններ անել: Հասցէ կարելի է իմանալ «Մշակի» խմբագրատանը:
2—5

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԵՒ ԿՈՎԱՍՍԵԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱԿԱՆՈՑՆԵՐՈՒՄ
Վաճառվում են պակասեցրած գներով ԲԱՐՍԵՂ ԲԱՍՄԱՆԵՆԻ հետեւեալ հրատարակութիւնները:
ՀԱՄԼԵՏ
Ողբերգ. զինը 60 կող.
ԷԼԻԶԱՅԻ ՎԻՇԵՐ
Գինը՝ 10 կող.
ԷՄՄԱՆՈՒԷԼ ՄԱՆԻԻ ԹԱՂՈՒՄՆ
Գինը՝ 5 կող.
Այս գներով վաճառվում են միմիայն թիֆլիսում:
3—6

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

COMPAGNIE DES MESSAGERIES MARITIMES
PAQUEBOTS-POSTE FRANÇAIS.
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
(ՄԵՍԱԺԵՐԻ ՄԱՐԻՏԻՄ)

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵԼԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ:
Ուրբաթ, 10/22 նոյեմբերի ԲԱԹՈՒՄԻՑ դուրս կը գնայ շոգենաւ **COMBODGE** (ԿԱՄԲՈՋ) նաւապետ **REMES** (ՐԵՄԵՍ), մանկով Կ. Պօլիս, Պօրտ-ԼաՏօս և Լակապա: Ազնաները՝ ԲԱԹՈՒՄԻՄ պ. Գ. ԷՍՍԵՆՇԵՐ, ԹԻՖԼԻՍԻՄ ԳԵՐԳ. ՀԵՋՈՒԲԵԱՆ ՀԵՋՈՒԲԵԱՆ, իսկ ԲԱԹՈՒՄԻ մէջ ԳՕԼԻՆՈՒՍ:
1—2

Прибжаа ДАМА, оканчившая курсъ въ Петербургской Консерваторіи, даёт уроки **МУЗЫКИ**. Адресъ: Гановская улица, домъ Шахназарова, спросить въ магазинѣ Фрейманъ.
Թիֆլիս նոր եկած մի **ՏԻԿԻՆ**, որը աւարտել է իր ուսումը Պետերբուրգի երաժշտական Կոնսերվատորիայի մէջ, տալիս է երաժշտութեան դասեր: Հասցէն. Գանովա-կայա փողոց, տուն Շահնազարովի, հարցնել Ֆրէյմանի մագաղանում:
3—3

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԳՊՐՈՑԻ ՀՈԳԱԲԱՐՁՍԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ մէջ նոյեմբեր ամսի 22-ին, երեկոյեան 8 ժամին կը լինի աճուրդ (առանց կրկնաճրդի) կապալով տալու այժմեան դպրոցի ներքնայարկի մի սենեակ իր նկուղով, որ գտնվում է III Ալէքսանդրեան թաղում հին փոստային փողոցում: Պայմանաւորուղթը կարելի է կարգաւ Հոգաբարձութեան զիւանատան մէջ ամեն օր, բացի կիրակիէից և տօներից, ցերեկվայ ժամը 10-ից մինչև 12 ժամ:
2—3

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵԼԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ:
Չորեքշաբթի, նոյեմբերի 8-ին, ԱՆԱՏՈԼԻԱ (ANATOLIE) շոգենաւը, նաւապետ **ԲՕՇԵԼ (BOSCHEL)** դուրս կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Սամսոն, Կ. Պօլիս և Մարսել: Տեղեկութիւնների մասին պէտք է զիմէլ ընկերութեան գործակալներին. Բաթումում Լէմոլլուի տան, Նաբերէժնայա, և Թիֆլիսում՝ Նախկին Արժուոնի գալերէում, № 114.
(Ծ.) 3—3

ԲԺԻՇԿ ՊՐԷՕԲՐԱԺԵՆԱԿԻ

Մասնաւորապէս բժշկում է էլեկտրականութեամբ, ֆարադական և գալվանական հոսանքով ձնաքերի և ոտների անդամաւորութիւնից, բէլմատիզմից, ներվային հիւանդութիւններից և կոնրակուրայից (մկանունների անդամաւորութիւն), բժշկում է կոլերիկ և խուլերի անդամաւորութիւնից և նոյնպէս ընդունում է կանայի հիւանդութիւններով և սիֆիլիսով տկարներին:
Հիւանդների ընդունելութիւնը ամեն օր, առաւօտեան 9 ժամից մինչև 12 ժամ և երեկոյեան 7 ժամից մինչև 8 ժամ: Տուն Պօլիսի փողոցի անկիւն № 9 և Ելիսաւեայի թաղայա № 2, Խոտնոյանութեան մօտ, Վորոնցովեան կահաւորված սենեակների զիմաց:
Домъ Попова, уголъ Михайловской ул. № 9 и Елисаветинской № 2, около Интендантства, противъ Воронцовск. номеровъ.
14—14

Въ редакціи газеты „МШАКЪ“ продаются слѣдующія брошюры: 1) „Экономич. Положеніе Турецкихъ Армянъ“, публич. лекція Д—ра Г. Арпруни, перев. съ арм. А. Аракелианца. Цѣна 25 к. 2) Die Economische Lage der Armenier in der Türkei, ein öffentl. Vortrag von Dr. Grigor Arzruni, übersetzt von A. Amiranjanjanz. Preis 25 k. 3) Die Hungersnoth in Türkisch-Armenien, ein Vortrag von Dr. Grigor Arzruni, übersetzt von Amiranjanjanz. Preis 20 kop.

Иногородные, желающие получить брошюры, благоволятъ присылать по 30 коп. почтовыми марками, за каждую брошюру.

Адресъ. Тифлисъ, Редакція „Мшакъ“, или Tiflis, Redaction „Mschak“. (b)

